

ԱՌԱՔԵՆԱԼՆԵՐԷՆ ՄԻՆՁԵՒ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

22. Հայ Եկեղեցւոյ հին պատմադիրները բաւական ընդարձակ կերպով ազգին առաջին լուսաւորութիւնը կամ առաջին դարձը պատմելէն ետքը, երկրին քրիստոնէութեան վրայ ուրիշ պատմութիւն չեն ներկայեր, և յանկարծական ուսումնով մը կանցնին Լուսաւորչի պատմութեան և Հայոց վերջնական և ընդհանուր քրիստոնէութեան, այնպէս իմն կարծել տալով, իբր թէ Բարթողիմէոսի նահատակութենէն անմիջապէս ետքը Գրիգոր մէջ տեղ ելած և քրիստոնէութեան քարոզութիւնը շարունակած ըլլայ: Սակայն Բարթողիմէոսի նահատակութենէն մինչև Գրիգորի վերապէն ազատուիլը, 60-էն մինչև 301, երկուքուկէս դարու միջոց կայ, և եթէ այդ միջոցին Հայ Եկեղեցւոյ վարդապետութիւնը և հայրապետութիւնը ընդհատուած կարծեմք, նոյն իսկ Հայ Եկեղեցւոյ առաքելականութիւնը վտանգի ենթադրած կըլլամք կերպով մը, և ուժովցուցած անոնց տեսութիւնը, որք չարամիտ դիտմամբ Հայ Եկեղեցին Գրիգորեան կամ Լուսաւորչական կոչել կը սիրեն, այնպէս իմն ուզելով իմացնել թէ Գրիգորէ առաջ Հայ Եկեղեցի չկար և թէ Հայ Եկեղեցին առաքելական չէ, Հարկաւ այդպիսի դիտում մը մերայնոց վրայ չեմք կրնար ենթադրել, բայց ասոնց ալ Լուսաւորչի վրայ ունեցած պաշտելութիւննին և Լուսաւորչի գործին մեծութիւնը զգալի ընելու փափագնին այնչափ զլրնք գրաւեցին և մղեցին, որ բոլորովին մոռցան փնտռել, գտնել, գրել և յիշատակել ինչ որ Առաքեալներէ մինչև Լուսաւորիչ Հայոց քրիստոնէութեան և Հայոց աթոռոյն առաքելականութեան հիմ և փաստ պէտք է ըլլայ: Բարեբաղդարար տակաւին մեզի հասած կան թէ ազգային և թէ օտարազգի աղբիւրներու մէջ այնչափ ինչ, որ թէպէտ ընդհատ և կցկտուր, սակայն լիովին կը բաւեն ապացուցանել թէ Առաքեալներէ մինչև Լուսաւորիչ չէր ընդհատուած Հայոց Եկեղեցին, և թէ կրնայ պաշտպանուիլ և ցուցուիլ Հայ Եկեղեցւոյն շարունակութիւնը, ինչ կերպով որ

ուրիշ առաքելական եկեղեցիներ կը ցուցնեն իրենց շարունակութիւնը:

23. Առաքելականութեան պահանջը նկատի առնուեցաւ վերջին ժժ դարուն սկիզբները, և Առաքեալներէն մինչև Լուսաւորիչ հայրապետական աթոռոյն շարունակութիւնը ապացուցանող աղիւսակի մը կազմութեան ձեռնարկուեցաւ, որ և ձեռաց ժամադիրքներու ետեւը հրատարակուած է: Շահաթոռնեան Յովհաննէս եպիսկոպոսը կը կարծուի այդ ցուցակին առաջին հեղինակը, որ առաքեալներէն մինչև իւր օրը կը հասցնէր Ամենայն Հայոց հայրապետութեան գաւազանագիրքը, և ուստից մեր նկատողութեան նիւթ պիտի ընեմք միայն Լուսաւորիչէ առաջ երեք դարերուն մասը: Քսենոկորոս անուններ կը պարունակէ ցուցակին այդ մասը, ուր շարքի անցած են երեք առաքեալները, Թադէոս, Բարթողիմէոս և Յուդա, և այն ոչ իրարու ետեւ, մնացեալ 21 անուններէն 3 Արտազու, 4 Սիւնեաց, 7 Նդեսիոյ և 7 Կեսարիոյ եպիսկոպոսներ են, և 25-րդ անունը Գրիգոր Լուսաւորիչն է: Այդ ցուցակին հեղինակը նկատի առած է թէ Արտազու առաջին եպիսկոպոս Զաքարիա, Սիւնեաց առաջին եպիսկոպոս Սևտաթէոս, Նդեսիոյ առաջին եպիսկոպոս Եղդէ, և Կեսարիոյ առաջին եպիսկոպոս Թէոփիլոս, չորսն ալ Թադէոսէ ձեռնադրութիւն առած են, և չորսն ալ Թադէոսեան աթոռներ լինելով կրնան իրարու բացերը լրացնել և Հայոց եկեղեցւոյ Թադէոսեան աթոռին շարունակութիւնը կազմել: Սակայն տարօրինակ կը լինէր այդպէս կցկտուր և անյարիւր կերպով գաւազանագիրք մը կազմել, որ երբեք մի և միակ աթոռոյ շարունակութիւնն ալ չէր կրնար ապահովել: Ասկէ զատ Նդեսիոյ աթոռը եղած է Ոսրոյենայ մետրապոլիտութեան կեդրոնը և Անտիոքայ պատրիարքութեան հնազանդող տասնուչորս մետրապոլիտական նահանգներէն մին, իսկ Կեսարիա յառաջն Պոնտոսի եքսարքութեան կեդրոն, յետոյ եղաւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան հնազանդող մետրապոլիտական նահանգներէն մէկը, այնպէս որ եթէ Հայոց աթոռը ուզէր ինքզինքը իբր Նդեսիոյ կամ Կեսարիոյ աթոռներուն շարունակութիւն կամ շառաւիղութիւն ցուցնել, նոյին իսկ ինքնուրոյն և ինքնօրէն աթոռը մը եղած և մնացած լինելու իրաւունքը կ'որստուած կըլլար:

24. Հայոց աթոռոյն սկզբնական և նախնական ինքնօրէնութեան հաստատութիւնը, նոյն իսկ հայրապետական աթոռ-

ներուն ծագումէն յայտնի է: Ինչ որ պատրիարքութեանց ծագման համար առաքելոց կամ աւետարանչաց յարարերութիւններէն, կամ ըստ Լատինաց՝ Պետրոսեան աթոռ եղած լինելէն քաղել կուզուի, մտացածին բան մը լինելը կը յայտնուի, երբ ակնարկ մը նետեմք Հռովմէական կայսրութեան քաղաքական բաժանմանց և հայրապետական և մետրապոլտական և եպիսկոպոսական աթոռներու ցուցակներուն վրայ: Սրկու բաժանումներ յարանման են իրարու, և յայտնի է թէ եկեղեցական իրաւասութիւնները կ'ազմուեցան և կ'ազմակերպուեցան պարզապէս քաղաքական իշխանութեանց բաժանմանց հետևողութեամբ: Ինչպէս եպիսկոպոսներ և և մետրապոլիտներ եղան այն քաղաքներ որ դաւառագլուխ և նահանգաղուխ էին, այնպէս ալ հայրապետներ եղան այն քաղաքներուն մէջ, որ ընդարձակ կուսակալութեանց կեդրոն էին: Առաջին Հռովմ լատինական և յարակից նահանգներուն կեդրոնը, յետոյ Աղէքսանդրիա և Անտիոք՝ եգիպտական և արևելեան երկու մեծ կուսակալութեանց կեդրոններ, ի վերջոյ Կեսարիա և Սիեսոս և Հերակլիոս՝ պոնտական և տսիական և Թրակիան երեք կուսակալութեանց կեդրոններ: Այս վեց քաղաքներն եղան Հռովմէական կայսրութեան սահմանաց մէջ վեց հայրապետական աթոռներ: Չորրորդ դարուն մէջ քրիստոնէութեան զօրանալէն ետքը, Անտիոքայ պատրիարքութենէն երկու նահանգ առնուելով Նրուսադէմայ պատրիարքութիւնը հաստատուեցաւ ի պատիւ սուրբ և աստուածակոխ քաղաքին, որ մինչև այն ատեն պտրզ եպիսկոպոսարան էր Կեսարիոյ Պաղեստինացւոց մետրապոլտութեան ներքե, իսկ Կոստանդնուպոլսոյ շինութենէն և մայրաքաղաք հռչակուելէն ետքը Կեսարիոյ և Սիեսոսի և Հերակլիոյ աթոռները խափանուեցան և միանալով մեծագոյն և ընդարձակագոյն Կոստանդնուպոլսոյ հայրապետութիւնը կազմեցին, մինչ յառաջ Իբլզանդիոն Հերակլիոյ աթոռոյն ներքե պարզ եպիսկոպոսարան էր: Ահա հայրապետութեանց ծագումը և իրաւասութեանց սահմանը: Հայոց եկեղեցին և Հայոց աթոռը առնցմէ և ոչ միայն մաս կամ ենթարկեալ չէր կրնար եղած ըլլալ, որովհետև հռովմէական կայսրութեան ալ ենթարկեալ չէր և կայսերական իրկիրներու մաս չէր կազմեր, և Հայոց հայրապետական աթոռը ի սկզբանէ անտի ինքնուրոյն և ինքնօրէն ծագում և կ'ազմակերպութիւն ունեցաւ:

25. Հայոց հայրապետութեան նախնական ժամանակն-

ըը ուսումնասիրած ատեննիս երկու աթոռներ կերնեն մեր ղիմաց, Արտազն ու Սիւնիք, որ կրնան իբրև հայ աթոռներ նկատի առնուիլ։ Մեր երկու առաջին առաքեալներն ալ, կամ ինչպէս սովոր եմք անուանել, երկու առաջին լուսաւորիչներն ալ Սիւնեաց երկրէն անցան և այն տեղ մէկմէկ փոխանորդ թողուցին։ Թաղէոսի թողածն է Նւստաթէոս, Բարթողիմէոսի թողածն է Կոմսի։ Վերջինս առաջինին յաջորդելով նորա վկայական մահուանէ յետոյ, Նւստաթէոսի գերեզմանը կը գտնուի ի Տաթև, և նոյն իսկ Տաթև անունը Նւստաթէոսի անունէն ծագում առած կը կարծուի։ Սակայն երկու առաքեալներն ալ անցողաբար քարոզեցին Սիւնիք նահանգին մէջ, իսկ իրենց կեղորոնը եղաւ այն տեղ, ուր կատարուեցաւ իրենց նահատակութիւնը, և ուր եղաւ իրենց գերեզմանը։ Նոր նահատակուեցաւ Թաղէոս, Բարթողիմէոսի գալուստը չէր դիտցուիր, ուստի առաքեալը նախահոգ մտածութեամբ իրեն յաջորդ և հայ հաւատացելոց գլուխ և առաջնորդ նշանակեց Ջաքարիան՝ իւր լծակից և պաշտօնակիցը (Սուր. Ը. 53), և այս կերպով Արտազու աթոռը միւս աթոռներուն մէջ գլխաւոր և առաջին լինելու հանգամանքը ստացաւ, կամ մեր այժմեան բացատրութեամբ, հաւատացելոց հայրերուն վրայ հայրապետ լինելու պատիւն ու իրաւունքը վայելեց։ Ըստ այսմ Քրիստոսի 43 թուականէն Ջաքարիան կրնայինք ճանչնալ իբր Լայոց հայրապետութեան աթոռակալ, միայն թէ քիչ ետքը Բարթողիմէոսի հասնելովը, գլխաւորութիւնը և առաջնութիւնը առաքելոյն վրայ պէտք կը լինի ճանչնալ։ Ջաքարիա Արտազու մէջ մնայուն տեղակալի դերքը պահեց, մինչև Բարթողիմէոսի նահատակութիւնը 60-ին, ուսկից ետքը դարձեալ բուն աթոռակալութիւնը դարձաւ Ջաքարիայի վրայ։

26. Արտազու աթոռին վրայ գրեթէ և ոչ մի տեղեկութիւն չկար մեր ձեռքը հասած հեղինակներուն մէջ, և եթէ այն չափով մնայինք, շատ դժուար պիտի լինէր Լայոց աթոռին յաջորդութեան վրայ խօսիլ։ Սակայն այն բարեբաղդ պատահարներէն միոյն զօրութեամբ, որ իրենց անշնանակ կերպարանին ներքև ամենէն մեծ կարևորութիւն ունեցող լոնդր մը կը լուծեն ու կը պարզեն, մայր Աթոռոյն գրչագիրներէն մէկուն մէկ անկիւնէն երևան կերնէ յիշատակարան մը, որոյ սկզբնական գրութիւնը կը բարձրանայ մինչև ՂԱ=649 թուականը, և պատկառելի հնութեամբը և Արտազու տեղական աւանդու-

թեանց և յիշատակաց վրայ հիմնուած լինելովը. նովին իսկ կստանայ այն հեղինակութիւնը, որ այսպիսի մթին և պատմութենէ աղքատ ժամանակաց համար, կը վայելէ ամենէն փոքր յիշատակարանն ալ, ինչպէս ամեն հնախոյզք և պատմագէտք սովոր են ընծայել: Այդ թանկագին յիշատակարանը նախապէս հրատարակուեցաւ 1869-ին Մայր Աթոռոյ պաշտօնական Արաւրատ ամսաթերթին մէջ, և անկէ փոխանցուեցաւ զանազան հրատարակութեանց (Սամ. 279): Այդ յիշատակարանին հետեւողութեամբ պիտի կարենամք մեք ալ փոքր ի շատէ կազմել Արտագու աթոռին, այսինքն է Հայոց հայրապետութեան նախնական աթոռին յաջորդութիւնը: Արդ այս յիշատակարանն ալ Զաքարիան կը դնէ իբր անընդմիջական յաջորդ թագէտի, ինչպէս ուրիշ աղբիւրէ ալ տեսանք. իսկ ճաքարիա ապի լինել նահատակեալ յերուանդ արքայէ Հայոց զկնի 42 ամի համբառնալոյ Փրկչին: Թուականը բաւական համակերպ է պատմութեան, նահատակութիւնը հալածանաց և հեթանոսական մոլեռանդութեան ժամանակներուն համար շատ բնական, միայն թագաւորի անունը Խորենացւոյ պատմութեան յարմար է, մինչ ըստ արտաքինոց Յիրիթի կամ Տրդատի ժամանակին կիյնայ, սակայն նոյն անձի ալ տարբեր կոչումներ չառ են այդ ժամանակներու մէջ. ուրեմն շուրջ 73-ին հանդիպած պէտք է ըսել Զաքարիայի վախճանը. Թագէտի նահատակութենէն 30 տարի ետքը, որ է երկարատե հովուութեան միջոց մը, մէկ մասը իբր Բարթողիմէոսի օգնական և մաս մըն ալ ամբողջաբար իւր գլխաւորութեամբ:

27. Ճեւտ սրբոյն կարգեցին եպիսկոպոս Զմեմնտոս. սա իբր 4 ամ հովուեաց զհաւատացեալսն Քրիստոսի և վախճանեցաւ: Այս միկնոյն Զմեմնտոս իշխանն է, որ Թագէտի նահատակութեան ատեն սխալմամբ սպանուելով առաքելոյն աղօթքով վերստին կենդանութիւն ստացաւ (Սուփ. Ը. 55), և որ ի վերջոյ Զաքարիայի հետ գործակից և հաւատացելոց վերակացու ցուցուած է (Սուփ. Ը. 75), և շատ դիւրին է իմանալ թէ ինչպէս անոր կիյնար Զաքարիայի յաջորդն ալ ըլլալ. և որովհետեւ արդէն տարիքը առած էր, 4 տարուան համաբօտ պաշտօնավարութենէ ետքը վախճանեցաւ խաղաղութեամբ, որովհետեւ նահատակուելուն յիշատակը չունիմք: Թուականը հաշիւներու հետեւողութեամբ կրնայ դրուիլ 78 ին: Ճպա Ատրնեբրսեհ եպիսկոպոս. սա յետ կառավարելոյ զժողովուրդս 15 ամ, նա-

հատակեցաւ ի բարըւորոսացա՝ Այս երանելոյն անունն ու պաշտօնը միայն Արտաղեան յիշատակարանին մէջ կը գտնուի, և կը բաւականանամք այնտեղ գտածնիս պատմութեան կարգն անցնել, այսինքն է Զեմինտոսի յաջորդելը, 15 տարի պաշտօնավարելը և մարտիրոսութեամբ պատկուելը, որ քրիստոնէութեան համար համարձակութեամբ և արդիւնաւորութեամբ աշխատելուն փաստն է: Իսկ ժամանակագրական կարգով կը հանդիմարմարաբար մինչև 94 թուականը, որով մինչև առաջին դարուն վերջերը հայ եկեղեցւոյն և հայ աթոռին ինքնուրոյն և ինքնօրէն կացութիւնը ներկայացուցած կը լինիմք: Ատրնեբսահի յաջորդի անունը ուրիշ կողմէ ալ անուղղակի փաստմը կաւելցնէ արտաղեան աթոռոյն հաստատութեան, այլ պէտք է առաջ Սիւնեաց աթոռին վրայ ալ խօսիլ:

28. Սիւնեաց աթոռոյն առաջին սկզբնաւորութիւնը կը վերագրուի Թադէոս առաքելոյն, որ իւր առաքելական շրջանին մէջ իւր աշակերտներէն Սևտաթէոսը թողուց Սիւնեաց նորահաւատ քրիստոնէութիւնը հովուելու: Սիւնեաց պատմիչն Օրբէլեան Սևտաթէոսի վրայ չխօսիր, բայց Սևտաթէոսի դերեզմանն ի Տաթև, և նոյն իսկ Տաթև անուան Սևտաթէոսի կամ Ստաթէոսի անունէն յառաջ եկած լինելը շատ իսկ են Սևտաթէոսի պատմութեան ստուգութիւնը երաշխաւորելու Սևտաթէոսի կը տրուի 25 տարուայ պաշտօնավարութիւն և նահատակութեամբ վախճան: Այդ հաշուով 35էն մինչև 60 թուական կը հասնի Սևտաթէոսի գործունէութեան ժամանակը: Բարթողիմէոս առաքելն ալ շրջած էր Սիւնեաց կողմեր և նորա աշակերտներէն Կոմսի Գողթն գաւառի մէջ քրիստոնէից զրուս գրուած էր: Ստ ինքն Կոմսի, զոր Օրբէլեան Սիւնեաց եպիսկոպոսներուն գլուխը կը դնէ, Սևտաթէոսի յաջորդեց և Սիւնեաց աթոռին երկրորդ եպիսկոպոսը եղաւ և խաղաղութեամբ վախճանեցաւ և գերեզմանը կը ցուցուի տակաւին Ագուլիսի Ս. Թովմաս վանքի մէջ: Կոմսիի 28 տարուան պաշտօնավարութիւնը կը վերագրուի յոմանց, թէպէտ Օրբէլեանը յայտնի բան մը չըսեր. և այս հաշուով կը հասնիմք մինչև 88. եթէ ընդունիմք 28 տարուան պաշտօնավարութիւնը: Կոմսիի յաջորդը Օրբէլեանի պատմութեան ճիշդմամտ եղաւ խուժիկ ոմն Բաբելաս անուն, (Օրբ. 62), որուն վրայ աւելի յստակ և ստոյգ յատակ չեմք գտներ: Օտարագգի մը կերնի, Բարթողիմէոսէ ձեռնադրեալ կենթադրուի, և խաղաղութեամբ կը վախճանի,

որովհետեւ նահատակութեան յիշատակ չկայ: Բարեկամի թուականները չունիմք, բայց Կումսի և Բարեկամն, երկու խաղաղական մանուամբ վախճանուած եպիսկոպոսներ, բաւական տեւական պաշտօնավարութիւն ունեցած պէտք է ըլլան, և երկուքը ի միասին պիտի գրաւեն հարկաւ առաջին դարուն մեծ մասը մինչև Ատրնեբսէհի ժամանակը:

29. Օրբէլեան կը գրէ. «Ջկնի սորա (Բարեկամ) քաջալերեալք ի հոգւոյն առաքեն առ սուրբն Թադէ գոմն մի Մուշէ աւնուն, որ և ոչ կարաց անդրէն դառնալ»: Սիւնեաց երեք առաջին եպիսկոպոսներուն յաջորդելու կոչուած Մուշէն, հնար չէ ենթադրել թէ Թադէոս առաքելոյն ժամանակակից մէկը ըլլայ, ինչպէս առանց մտաւորութեան ուղեցին իմանալ ոմանք Օրբելեանի խօսքերը. հետեւեալ որ թէ Ս. Թադէոսի ձեռքէն այլ ո. Թադէոսի աթոռէն ձեռնադրուելու համար կրնայ Մուշէ Սիւնեաց նահանգէն Արտազ ուղևորիլ, Թադէոսի աթոռին վրայ նստող Ատրնեբսէհէն ձեռնադրութիւն ընդունելու համար: Աւելցնեմք որ երբ Օրբէլեան կըսէ թէ Մուշէ ետ չդարձաւ իւր տեղը, Արտազեան յիշատակաբանը կը գրէ թէ Ատրնեբսէհին «յաջորդեաց Մուշէ կամ Մուշեղ եպիսկոպոս յերկրէն Պարսիցա: Խուժիկ Բարեկամն աշակերտը պարսիկ Մուշէ մը եղած լինելը չատրնական է: Ս. Թադէոսի աթոռէն ձեռնադրուած Մուշէին ետ չդառնալը, անոր «Արտազու մէջ մնացած լինելը կը ցուցնէ. և յայտնի կերպով կը տեսնուի: Թէ Մուշէի ձեռնադրութենէն քիչ յետոյ Ատրնեբսէն կը նահատակուի, և դժուարին ժամանակաց մէջ Մուշէ նորա տեղ քրիստոնէից զուիս կը լինի: Արտազեան և Սիւսական յիշատակներուն այդ կերպով իրար լրացնելը, երկու աւանդութեանց հաւատարմութեան փաստ կը դառնայ, և հայ քրիստոնէութեան կեդրոնին Արտազու մէջ գտնուելուն կարծիքնիս կամրացնէ: Մուշէի համար կը գրէ Արտազեան յիշատակարանը թէ «յետ կառավարելոյ գծողովս սրբոց ի Թաքստեան իբր 30 ամ, վրճարեաց զկեանս իւր»: «Ի Թաքստեան» կառավարելը հեռաւոր ակնարկութիւն մըն է Օրբելեանի «ոչ կարաց դառնալ» ին, և Ատրնեբսէհի նահատակութիւնն ալ յիշելով, կը գտնեմք որ ծանր հալածանաց միջոց մը եղած է երկրորդ դարուն սկիզբը: Այլ թէ Մուշէ ինքն ալ նահատակուեցաւ, Արտազեան յիշատակարանը չգրեւ. այն երկարատեւ պաշտօնավարութիւնը, ի առաւրբք և արդեամբք ի ձերութեան վախճանած լինելը կը

ցուցնէ. իրեն գլխաւոր պարծանք ունենալով հալածանաց ներքեւ երեսնամեայ միջոց մը եկեղեցին հովուած ու պաշտպանած լինելը: Մուշէի 30 տարիները իւր նախորդներուն շարունակութեամբ հաշուելով, նորա երջանիկ մահը կիսնայ Քրիստոսի 125 թուին:

30. Արտագեան յիշատակարանը կը շարունակէ. «Շահէն եպիսկոպոս ամս 25: Սորին յաջորդ յիշատակի ուրոյն Շաւարշ անուն եպիսկոպոս Աղուանից որ իբր 20 ամ կառավարեալ է զհօտն Արտագու: Եւ յետ այսորիկ Ղևոնդիոս եպիսկոպոս եկաց իբր զամս 17: Այս երեք հայրապետներ համանգամայն 62 տարի կը ներկայեն, և գոնէ մէկ մէկ տարի միջոց ալ աւելցնելով կունենամք 64 տարի և նախընթացներուն վրայ հաշուելով կը հասնեմք մինչև 190 թուականը, որ է մինչև երկրորդ դարուն վերջերը: Հայոց եկեղեցին ուրեմն, իրեն գլուխ ունենալով Արտագու աթոռին գլխաւոր եպիսկոպոսները կամ հայրապետները, առաքելական յաջորդութեամբ պահուած է ամբողջ երկու դարու ժամանակ իւր հիմնարկութենէն սկսելով: Շահէնի և Շաւարշի և Ղևոնդիոսի գործերէն ըսն մը չունիմք յիշատակուած, որ անով կարենայինք այդ առաքելաշնորհ հայրապետաց անունները փառաւորել. իսկ իրենց վախճանին նկատմամբ միայն Ղևոնդիոսի համար ըսուած է թէ ճանհատակեցաւ Շաւարշան տեղւոջն». որ է մեր առաջին առաքելոյն և առաջին վկայունւոյն մարտիրոսութեան տեղը. հայ քրիստոնէութեան արիւնագանգ օրրանը: Ղևոնդեանի յաջորդներուն վրայ յիշատակարանը տեղեկութիւն չտար. «Զկնի սորին չկարացաք գրտանել թէ որք յաջորդեալ են ի տեսութիւն եկեղեցւոյ առաքելական վիճակիս Արտագու: Այդ անուններու պակասութիւնը նախընթաց յիշատակներուն ստութեան երաշխաւորութիւնը կը կազմէ, որովհետեւ եթէ յիշատակագիրը ինքնահնար անուններով ուզէր Արտագու աթոռոյն հնութիւնը փառաւորել, դժուարութիւն պիտի չգգար քանի մը անուն ևս աւելցնելով երրորդ դարուն համար ալ հայրապետներ դնել, և շարքը չընդհատելով Լուսաւորչին հասնել: Բայց երբ գտածը կը յիշատակէ և չգտնալը կը խոստովանի, ուղղամիտ և խղճամիտ պատմաբանի և քննադատ հեղինակի ձեռքերը կը վկայէ, և իւր վկայութեանց հիմնական և ընդունելութեան արժանի լինելը կը ցուցնէ: Ոմանք չսիրեցին կարևորութիւն տալ արտագեան յիշատակարանին, կէս մը եղեսպան յիշատակաց ազդեցութե-

նէն նախապաշարեալ, և կէս մըն ալ Հայոց աթոռոյն առաքելական յաջորդութիւնը ուրանալու դիտմամբ, այլ որչափ դիտեմք և զննեմք, այնչափ աւելի Հայ եկեղեցւոյ առաքելականութիւնը և առաքելական յաջորդութիւնը, իւր զուտ ու ստոյգ հաստատութիւնը կը գտնէ արտադեան յիշատակարանին դրութեամբ:

31. Երրորդ դարուն մէջ արտադեան աթոռոյն գոյութեան և տնօրէնութեան նշանները կը պարտաւորուիմք ուրիշ տեղերէ քաղել, Օրբէյեան Սիւնեաց պատմիչը Ս. Թադէի աթոռը գացող և չգարձող Մուշէն յիշելէն ետքը կը յաւելու, թէ Սիւնեաց քրիստոնեայք ցանուցիւր կը մնային երկար ժամանակ, ի վերջոյ կը զրէ. «Ապա գնացեալ սոցա խնդրեցին իւրեանց առաջնորդ, և ետ այլ մի ծարոնացի Մովսէս անուն, և յետ սորա Սահակ ծարոնացի, և ապա զՋրուանդատ, և ապա զՍտեփանոս, և ապա զՅովհաննէս» (Օրբ. 62): Այս հինգ անունները ոմանք իբր Լուսաւորչէն դրուած եպիսկոպոսներ հասկացան, և այդ ենթադրութեամբ Օրբէյեանն ալ ինքնիրեն հակասող ուղեցին ցուցնել, որովհետև ուրիշ տեղեր կը զրէ թէ Լուսաւորիչն Սիւնեաց իշխանին խնդրանօք «չնորհէ նմա զօրն յԱսորոց անտի զոր բերեալ էր» (Օրբ. 58), և ապա եպիսկոպոս կը կարգէ «զոմն յիւրոց մերձաւոր աշակերտաց որոյ անունն Դրեգորիս» (Օրբ. 59), որ և 46 տարի պաշտօն կը վարէ, և Ներսէս Մեծն «ձեռնադրէ զերանելի այրն Մաշտոց երկրորդ զկնի Գրիգորիսի» (Օրբ. 68). և պատմութեան վերջն ալ Սիւնեաց եպիսկոպոսներուն Լուսաւորչէն ետքը ցուցակը կազմած ատեն առաջին հինգ անունները չյիշեր. (Օրբ. Բ. 246): Բայց եթէ փոխանակ Օրբէյեանը հակառակաբոս կարծելու, աւելի մտազիր կերպով անոր գրածները զննէին, կը տեսնէին որ առաջին հինգ անունները կը գտնուին այն զլիսոյն մէջ, որ մակագրուած է. «Զրոյցք հին ժամանակաց» (Օրբ. 60), իսկ վերջին յիշուածները կը պարունակեն ուրիշ զլիսոյ մէջ որ մակագրուած է. «Սակա լուսաւորութեան աշխարհիս Սիւնեաց ի ձեռն սրբոյն Դրեգորի» (Օրբ. 55), և առաջին յիշուած զլիսոյն մէջ միջանկեալ կերպով Լուսաւորչի յիշուելը՝ նիւթը չփոխեր, և Օրբէյեանի միտքն ալ կը լուսաբանուի, թէ յիշատակուած հինգերը, Մովսէս, Սահակ, Ջրուանդատ, Ստեփանոս և Յովհաննէս Մուշէն ետքը Սիւնեաց եպիսկոպոս եղած են Լուսաւորչէն առաջ, իսկ Ասորիւն և Գրիգորիս և Մաշտոց Լուսաւորչէն ետքը նոյն աթոռը հովուած են:

32. Օրբելեանի բացատրութեան ձևն ալ ուրիշ լուսաբանութեան առիթ կընծայէ, որովհետեւ չըսե՛ր թէ այն հինգերը պարզ կերպով մը և ներքին կարգադրութեամբ իրարու յաջորդած են, այլ ուրիշ մը կայ որ կուտայ. «ետ» և կը հաստատէ այն եպիսկոպոսները, և այդ ուրիշ իշխանութիւնը շուտ յայտնի կը լինի. գիտնալով թէ «առ սուրբն Թադէ», այսինքն է առ աթոռն Թադևոսի զրկուած էր Մուշէ ձեռնադրութիւնը զոնեկու, և անոր չղաւնալուն և այնտեղ հաստատուելուն վրայ, հարկաւ նոր հովուի մը ձեռնադրութիւնը նոյն աթոռէն ուղեցին, և նոյն աթոռն էր որ հետզհետէ յիշեալ հինգ եպիսկոպոսները ձեռնադրեց և զրկեց: Այս կերպով մէկ կողմէ կուտենանք երկրորդ դարու սկզբէն ետքը Սիւնեաց աթոռը վարդ և իրարու յաջորդող հինգ եպիսկոպոսներ, և միւս կողմէ կը հաստատուի թէ Արտազու աթոռը Հայոց եկեղեցւոյն զխաւորութիւնը կը պահէր իւր առաջնական հաստատութեամբ և յաջորդութեամբ, և ուրիշ աթոռներու համար ալ ձեռնադրութիւն կը կատարէր, և հետևաբար անոնց վրայ վերին հսկողութիւն ալ կը վարէր: Ժամանակագրական տեսութեամբ Օրբելեան բան մը չըսե՛ր թէ որչափ ատեն պաշտօն վարեցին Սիւնեաց հինգ եպիսկոպոսները, և կենաց երկարութեան վրայ ալ ենթադրական հաշիւներ չեն կրնար կազմուիլ: Արտազու մէջ Մուշէ, Շահէն, Շաւարշ և Ղևոնդիոս հովուած միջոցին, Սիւնեաց մէջ պահ մը աթոռը դատարկ մնալէն ետքը կը հովուեն Մովսէս, Սահակ, Զրուանդատ, Ստեփանոս և Յովհաննէս, և բոլորովին կամայական բան մը զրուցած լինել չեմք կարծեր, հետեցնելով թէ Սիւնեաց Յովհաննէսը՝ Արտազու Ղևոնդիոսին յաջորդ եղած և անունը մեզի անծանօթ մնացած հայրապետէ մը իսկ-ձեռնադրութիւն առած կրնայ ըլլալ:

33. Միւս կողմէ երրորդ դարու մէջ Հայոց հայրապետ մը գտնուած լինելուն վկայութիւնը կուտայ մեզի Եւսեբիոս Կեսարացին, որ 'Իրոնեսիոսի Աղէքսանդրիոյ հայրապետին զանազան եկեղեցեաց հետ թղթակցութիւնները յիշած ատեն կաւելցնէ, թէ դրեց շնոյնպէս ի Հայաստան (յԱրմենիա) վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր յայնժամ Մհարոթան» (Եւս. 517): 'Իրոնեսիոս Աղէքսանդրացին հայրապետ ընտրուեցաւ 245-ին և վախճանեցաւ 261-ին, իսկ առաջխաբուածեան կամ անկելոց լսնդիրը սկսաւ 251-ին 'Իեկոսի հալածանաց դադրելէն ետքը: Աթէ Եւսեբիոսի իշխատակութեանց շարքին իսկ ժա-

մանակագրուիլն յարդ մը տալ արժան է, ի դէպ է դիտել տալ որ առ Մեհրուստան նամակը յիշուած է առ Թելիմիդրէս Լաւոդիկեայ եպիսկոպոս և առ Կուռնելիոս Հռովմայ եպիսկոպոս գրուած նամակներուն մէջ տեղ, Կուռնելիոս Հռովմայ հայրապետ ընտրուեցաւ 254-ին, ըստ այլոց 251-ին և երեք տարւոյ չափ պաշտօնավարեց, իսկ Թելիմիդրէսի համար գիտեմք թէ 256-ին արդէն մեռած էր, վասն զի նոյն տարին Արևելեայց ժողովոյն ատեն եպիսկոպոս էր ճշեղիոդոր յետ Թելիմիդրէայ ի Լաւոդիկէ» (ՍԼՍ. 528): Ըստ այսմ թէ խնդրոյն ծագումը և թէ այդ թուականները կը ցուցնեն թէ առ Մեհրուստան նամակը գրուած է մերձաւորաբար 253-ին: Իսկ Մեհրուստանի աթոռոյն նկատմամբ ոմանք ուզեցին կարծել թէ ոչ Մեծ Հայոց այլ Փոքր Հայոց, այսինքն Նիկոպոլսոյ կամ Մելիտինոյ մետրապոլիտ մը եղած լինի, Սակայն գիտեմք թէ այդ աթոռներու մետրապոլիտները միշտ իրենց քաղաքին անունով յիշուած են, ինչպէս ըողոր կայսերութեան նահանգներուն մետրապոլիտները: Սև դարձեալ Սևսերիոս ուղղակի ճի Հայաստան» գրուած կըսէ նամակը, և հայ աշխարհի և հայ ազգի անունը չկրնար պատշաճիլ Նիկոպոլսեցւոց կամ Մելիտինեցւոց: Նոյն իսկ Մեհրուստան անունը յունալեզու և յունագգի փոքրհայեցի եպիսկոպոսի մը յարմար չգար, և աներկեւան կերպով կը հաստատեմք թէ Մեհրուստան Մեծ Հայոց գլխաւոր եպիսկոպոս մըն է, և Արտազու գլխաւոր աթոռին վրայ երրորդ դարու կէսէն ետքը բազմոց Հայոց հայրապետը: Իիտելու արժանի է Սևսերիոսի բացատրութեան մէջ «յայնժամ» բառը, որ խօսից կարգին և պատմիչին միտքին մէջ Հայերուն շարունակաբար եպիսկոպոսներ ունեցած լինելը կը հաստատէ: Սև վերջապէս գլխաւոր աթոռներու և նշանաւոր եպիսկոպոսներու յարաբերութեանց շարքին մէջ Հայոց եկեղեցւոյն և Հայոց աթոռին ալ կարևոր խնդիրներով զբաղած լինելը, և հաւանաբար Մեհրուստանէ առ Իիոնեսիոս և առ այլս ալ թուղթեր գրուած լինելը, Հայոց մէջ երրորդ դարուն կէսերը կարգաւորեալ բրիստոնէութիւն գտնուած լինելը ևս քանզևս կը հաստատէ:

34. Սրբորդ դարուն միջոցին Հայոց մէջ կարգաւորեալ բրիստոնէութիւն գտնուելուն օտարագգի վկայութիւն մըն ալ ունիմք ոչ նուազ կարևոր, Ծանօթ է Հոգեպալստեան օրը Յրուսաղեմի մէջ գտնուող օտարալեզու և օտարաքաղաքացի շրէաններուն զարմանքը, երբ լսեցին որ առաքեալները իրենց

միայն ծանօթ օտար լեզուներով կը խօսէին. գործք առաքել-
ութիւն սովորական ընթերցուածը կրէսէ. «Պարթեւք և Մարք
և Իլամացիք և որ բնակեալ են ի Միջագետս և ի Հրէաստանի,
ի Դամիւրս և ի Պոնտոս և յԱսիա և ի Փռիւզիա և ի Պամփիլի-
ւիա» ևայլն (Դործ. Բ. 9)։ Այդ հատուածին մէջ «ի Հրէաստանի»
խօսքին բոլորովին իսկ իւր տեղը չի կրնար յայտնի է. վասն զի
նախ որ Հրէաստան օտար երկիր չէ, առաքեալք և ունկնդիրք
Հրէաստանի մէջ էին, և Հրէաստանի լեզուն ալ օտար լեզու
չէ. և երկրորդ որ յիշուած երկիրներուն մէջ միշտ աշխարհա-
գրական դասակարգութիւն մը կը նշմարուի, Պարթեւներ և Մա-
րք և Պարսիկներ և Միջագետացիներ հետզհետէ կը յիշուին
Հրէաստանէ առաջ, և անկէ ետքը Կապադովկացիք, Պանտացիք,
Ասիացիք, Փռիւզացիք, Պամփիլացիք և այլք, արեւելքէն դէպ
արեւմուտք կանոնաւոր յառաջխաղացութեամբ։ Արդ երրորդ
գարու ամենէն նշանաւոր արեւմտեան մատենագիրներէն մին,
Տերտուլիանոս վարդապետ, միենոյն հատուածը յառաջ կը բե-
ւոյն այսպէս. «Պարթեւք, Մարք, Իլամացիք, և որք բնակեալք
են ի Միջագետս և ի Հայաստանի, ի Փռիւզիա և ի Դամիւրս,
և որք ի Պոնտոս և ի Պամփիլիա» ևայլն (Ընդդէմ Հրէից,
գլխից է)։ Մեք չեմք ուզեր Ս. Գրոց նախնական ընթերցուա-
ծոյն, և Հրէաստան անունին յարմարութեան կամ փոփոխու-
թեան քննական տեսութիւններուն մտնալ. և ոչ ալ պնդել թէ
Հայաստան անունը Տերտուլիանոսի ընթերցուածոյն համեմատ
մէշտ իր աշխարհագրական շարքին մէջ կը գտնուի՝ և կրնո՞ւն
Հրէաստան անունին այդ շարքին մէջ անյարմար յիշատակու-
թեան խնդիրը։ Մեզի համար բաւական է հետեցնել, որ Տեր-
տուլիանոս երրորդ գարուն կէսին մօտ կրելով, և ի Քրիստոս
հաւատացեալ աշխարհներուն կամ ազգերուն անունները համ-
բաժ առնել, Հայաստանի կամ Հայոց անունն ալ նոյն շարքին
մէջ կը դնէ. և երրորդ գարուն մէջ Հայոց մէջ կարգաւորեալ
քրիստոնէութեան գտնուիլը կը վկայէ և այս բաւական է մեր
յոռաջ բերած պատմութեան ստուգութիւնը հաստատել։ Այս-
պէս ուրեմն արտագեան յիշատակարանը առաջին և երկրորդ
գարերու Հայ եկեղեցւոյն համար թանկագին վկայութիւններ
կընծայէ, երրորդ գարուն համար յայտնի յիշատակներ չգտնա-
լը խոստովանելով՝ իր ստուգապատում և անկեղծ վկայ լինելը
կը հաստատէ, և այդ պակասը Եւսեբիոսի և Տերտուլիանոսի
օտարազգի մատենագիրներուն վկայութեամբ կամրողջանայ,

որով Հայ եկեղեցւոյն երեք առաջին դարերուն մէջ կարգաւորեալ գոյութիւնը, այլ ևս իբր յայտնի և կատարեալ պատմական ստուգութիւն մը կը փայլի:

35. Հայ քրիստոնէութեան համար լուսաւոր փաստեր են ևս հաւատոյ պահպանութեան և պաշտպանութեան համար կեանքերնին զոհող մարտիրոսներ, որք այդ երեք վարերու միջոցին Հայոց մէջ վկայեցին: Եկեղեցւոյն առաջին առաքելոց և առաքելաշաւիղ հայրապետաց անուններն ու գործերը պատմած առեւննիս, ասոնցմէ շատերուն յիշատակութիւնն ալ ըրինք, ուստի նորէն չենք վերադառնար պատմել Ս. Թադէոս և Ս. Բարթողիմէոս առաքելոց վկայութիւնը, Ս. Սանդուխտ, Ս. Զարմանդուխտ և Ս. Ոգուհի վկայունեաց մարտիրոսութիւնը, Ս. Սամուէլ, Ս. Իսրայէլ և Ս. Տերենտիոս իշխանաց և Սրտագու հազարաւոր վկայից նահատակութիւնը: Այս կարգին պէտք է յիշենք ևս Ս. Ագգէ հայրապետը և Ս. Աբգար թագաւորը, որք աւանդութեանց հետեանօք տօնելի դարձած են մեր եկեղեցւոյ մէջ: Առաքելոց առաջին աշակերտներուն կարգին Ս. Եւստաթէոս, Ս. Զաքարիա, Ս. Զեմենաոս և Ս. Կուսի յիշատակելի են արգէն յայսմաւուրքի մէջ. և անոնց հետ կը յիշատակուի ևս Ս. Յիւրիէ որ Աղուանից երկրին լուսաւորիչն ու առաջին հայրապետը եղաւ: Մեր կարծեօք տօնելի յիշատակներով պէտք էր որ պատուուէին նաև Մարիամ և Աննա և Մարթա առաջնապետուղ կուսանները, ինչպէս ևս Քատրներսէհ, Բաբելա, Մուշէ, Շահէն, Շաւարշ, Ղևոնդիոս և Մեհրուժան հայրապետները որք մարտիրոսութեամբ և խոստովանողութեամբ կնքեցին իրենց կեանքը Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյն ծառայութեան մէջ, նման այն երանաշնորհ հարց որք զանազան եկեղեցեաց առաջին հովիւներ եղան: Առաջին հայրապետաց կարգին անցուցին սմանք նաև Մխիթար Թանհատցին, որուն համար կը գրէ Օրբէլեան, թէ «գտաք յիւր արձանագրութեանց եթէ չորիքհարիւր ամաւ յառաջ շինեցաւ եկեղեցին (Թանհատի) քան զհայթուականն» (Օրբ. 204): Այս հաշուով Քրիստոսի 151 թուին կամ երկրորդ դարուն կիսուն փայլած կը լինի Մխիթար Սիւնեաց նահանգին մէջ, բայց որովհետև իրեն համար գրուած կը գտնեմք պարզապէս թէ «էր եղեալ հայր վանիցն (Թանհատի) որոյ անուն Մխիթար» (Օրբ. 204), և Սիւնեաց եպիսկոպոս եղած լինելուն յիշատակ մը չեմք գտներ, պարզ ճշդ նաւոր մը կը ճանչնամք զինքն և չեմք կրնար Սիւնեաց եպիս-

կոպոսներուն կարգը անցնել, ևս առաւել չենք կրնար Արտազու հայրապետներուն շարքին մէջ դնել, ինչպէս ոմանք կարծեցին, մանաւանդ որ նոյն թուականներուն Արտազու եպիսկոպոսներուն շարքը դրուած է մեզ արդէն արտադեան յիշատակագիրէն:

36. Հայ եկեղեցւոյ տօնելի մարտիրոսաց մէջ առաջին կարգին կելնեն մեր դիմաց Ս. Ոսկեանք կամ Ս. Ոսկի և ընկերք: Սոցա պատմութիւնը կըսէ թէ հոռոմայեցի էին և հինդ անձ, դեսպանութեամբ Հայոց երկիրը եկած, որք Թագէոս առաքելոյ քարոզութեամբ և հրաշքով քրիստոնէութեան դարձան, Մաղկէոյ լերան վրայ ճգնեցին, Արտաշէսի ժամանակ Սուքիասեանները քրիստոնէայ ըրին և այդ պատճառով նահատակուեցան մերձաւորաբար Գրիստոսի 107 թուին: Այդ Թագէոսի քարոզութիւնը և Ոսկեանց դարձը 43-է առաջ դնելով, և Ոսկեանները դեռ պահ եկած լինելուն համար կատարեալ մարդեր ենթադրելով, եթէ 107 թուականն ալ ընդունենք, հինգն ալ նահատակութեան ատեն հարիւրամեայներ պէտք է ընդունել: Իժուարութիւնը աւելի կը շատնայ դիտելով թէ Արտաշէսի թագաւորելը հնար չէ 117-էն առաջ դնել, և այն ատեն Ալանաց պատերազմը, Սաթինիկի ամուսնութիւնը, Ոռքիասանց դարձը, դարձին իմացուիլը և Ոսկեանց նահատակութիւնը առնուազն 120 թուին կը հասցնեն մեզ, և պէտք կը լինի հինգ Ոսկեան նահատակներն ալ հաւասարապէս հարիւրը շատոնց անցուցած ծերեր ենթադրել: Բայց որովհետև Ոսկեան անունն ու տօնը և Ոսկեանց օտարը ազգային աւանդութեանց հաստատուն կէտերը կը կազմեն, և իրենց անունն ալ սերտ կերպով կապուած է Արտաշէսի թագաւորութեան հետ: Յարմարագոյն է ըսել թէ ոչ ուղղակի Թագէոս առաքելոյն այլ Թագէոսի անմիջական աշակերտներուն ձեռք քրիստոնէութեան դարձան: Ոսկի անունը հաւանաբար թարգմանօրէն գործածուած է մեր մէջ փոխան յունական Խոիւսոս կամ լատինական Ալբեղիոս անուան: Իսկ Ոսկեանց քահանայից կոչումը ծագում առած է միայն խումբին զլխաւորին Ս. Ոսկիին քահանայական ձեռնադրութիւն ստացած լինելէն:

37. Ս. Սուքիասանց մարտիրոսութիւնն ալ Արտաշէսի ժամանակին կը վերադրուի: Սոքա Ալան իշխաններ էին, Սաթենիկի հետ եկած և Արտաշէսի արքունեաց մէջ մնացած, որք Ս. Ոսկեանց քարոզութեամբ քրիստոնէացան և Սուկասեոս

լերան վրայ ճգնաւորութիւն ըրին, և յայտնուելով նահատակուեցան զլիաւորնին Սուքիաս որ յառաջն Բունադրա կը կոչուէր և նորա տասնուվեց ընկերները, իսկ ընկերներէն երկուքը մարտիրոսութենէ ետ մնալով ճգնութեամբ ապրեցան, և անագան հանգեան: Նահատակութեան թուականը սովորաբար կը դրուի 129-ին. որ կը յարմարի Արտաշէսի տարիներուն, և ուրիշ կողմէ ալ դժուարութիւն չկրել: Միայն թէ վկայաբանութիւնը Ոսկեանները և Սաթենիկը յիշելէն ետքը կը յաւելու, թէ մարտիրոսութիւնը տեղի ունեցաւ Պարսից Շապուհ Թագաւորին ժամանակ, Պարթևաց Արտաւանին և Հայոց Խոսրովին սպանութենէն յետոյ. և Հայոց լուսաւորութենէն քիչ առաջ. զի երբ Ղուկիանոս, Սուքիասի ընկերներէն մին, կառաջարկէ Բագաւանի բազինները կործանել, Սուքիաս կը պատասխանէ. «Նկեացէ այլ մշակ զօրագոյն քան զմեզ, նա կործանեացէ» (Սուք. 38): Իսկ նահատակող անձին անունը միշտ Բաւլահա կոչուած է, և գործը կատարուած է իբր թէ Ալանաց Թագաւորին հրամանով: Այդ Շապուհի թագաւորելը տեղի ունեցած լինելով 241-ին, Սուքիասանց մարտիրոսութիւնը հարկ կը լինէր երրորդ դարուն կէսէն ետքը յետաձգել: Սուքիասեան վրկայից թիւն ալ վկայաբանութիւններէն ոմանք մինչև երեքհարիւր վաթսուռուշորսի կը բարձրացնեն, զոր դժուար չէ բացատրել, զի հարկաւ հալածանք մը քանի մը անձանց մարտիրոսութեամբ չփակուիր, և Սուքիասեան տասնուեօթը ընկերներուն Սուկաւէտ լերան վրայ նահատակուած միջոցին, ուրիշ կողմեր 347 կամ 364 վկաներ և թերևս աւելին ալ մարտիրոսութեամբ պսակուած են:

38. Մարտիրոսութեանց յիշատակ մըն ալ լատին վկայաբանութիւններէն կը քաղեմք: Հռովմայեցի զինուորներու ինն հազար հոգւոյ բանակ մը քրիստոնէութիւն ընդունած լինելով Հայաստան կը փախչի և Արարատ լերան կողմերը կը ընակի, ուր տեղացիներէն ալ հազար հոգիներ կաւելնան և կըլլան բիւր մի քրիստոնեայներ և ճգնութեամբ ատեն կանցնեն Արարատ լերան վրայ. Ագրիանոսի ժամանակ իրենց վրայ հալածանք կը հանուի և զանազան ստիպումներէ և տանջանքներէ ետքը ամենքն ալ խաչերու և ծառերու և կախաղաններու վրայ պրկուած կը նահատակուին: Գլխաւորին անունը Ակակիոս կամ Ակագիոս կը յիշուի, իսկ բոլոր խումբը ծանօթ է Արատեան վկայից անունով, և ժամանակը մերձաւորաբար կը

գրուի 120-ին: Վկայաբանութեանց մէջ ունիմք Ռամելոս կամ Հռոմուլոս զօրավարին յիշատակը, ուր կը պատմուի թէ սա ուրիշ հինգ զօրավարներով և ռասըհազար զինուորներով քրիստոնէութիւն ընդունեցան, և Տրայիանոսի ժամանակ Գաղատիոյ պատերազմի մէջ քրիստոնէութիւնին յայտնուեցաւ. Ռամելոս նահատակուեցաւ, զոր և կը տօնեմք, իսկ բանակը աքսորուեցաւ ի Մելիտինէ: Ժամանակները և պարագայները կարի յարմար կուգան ըսելու, թէ սոյն այս Մելիտինէ աքսորուած բանակն է որ մինչև Արարատ քալած է և այն կողմերը առանձնացած, և թերևս նոյն իսկ Տրայիանոսի Արարատեան դաշտին Արտաշատը գրաւած միջոցին հալածուած ու նահատակուած: Իրենց յիշատակին լատին վկայաբանութեանց մէջ պահուած լինելը հռովմէական կայսեր մը կողմանէ նահատակուած լինելին կը հաւաստէ: Ամեն առթի մէջ Ոսկեանց և Սուքիասանց և Արարատեանց միևնոյն միջոցին նահատակուիլը և նոյն միջոցին Հռովմայեցւոց Հայաստան արշաւելը, և Հայոց Արտաշէսին, զոր պիւրին է լատին պատմիչներու Տիրիթին կամ Տըրդատին հետ նոյնացնել, Հռովմայեցւոց ունեցած յարաբերութիւնները, կը բացատրեն թէ ինչու և ինչպէս երկրորդ դարուն մէջ ընդհանուր հալածանք մը եղած է Հայաստանի մէջ քրիստոնէութեան դէմ, անոր արդէն կարևոր դիրք մը ստացած ըլլալուն համար:

39. Սրբորդ դարու համար ալ նմանօրինակ հալածանաց յիշատակ մը ունիմք Խորենացիէն, որ Փիրմիլիանոսի Վեսարիոյ եպիսկոպոսին վրայ խօսելով կըսէ. «Գրէ բազում վկայեալս և ի Խոսրովու ի մերում աշխարհին, համայն և յետ նորա օտարք յօտարաց՝ բայց զի ոչ ճշմարտութեամբ ոճով պատմէ և ոչ վանուանս նշանակէ կամ զտեղի կատարմանցն, ոչինչ կարևորագոյն համարեցաք երկրորդել» (Խոր. 330): Ինչ որ ըլլայ քննադատներուն կարծիքը Փիրմիլիանոսի պատմութեան վրայ, և ինչպիսի ալ Խորենացւոյն գրութեանց մէջ ժամանակագրական անյարմարութիւններ գտնուին, Իրոկղեանիանոս կայսրը և Պետրոս հայրապետը յիշելուն համար, սակայն մեզի պատկանեալ կէտը դժուարութեան չհանդիպիր, զի Փիրմիլիանոս՝ որ 269-ին մեռած է, կրնար պատմել Խոսրովու գործերը՝ որ սպանուեցաւ 240-ին: Խոսրովու թագաւորութեան 20 տարի տևողութիւն կը տրուի 220-էն 240, և այս միջոցին հայ քրիստոնէից հալածանք կրելը և շատերուն մարտիրոսանալը լուսաւոր կերպով

կը ցուցնէ. Թէ երբորդ դարուն առաջին կիսուն մէջ տարածեալ և կարևոր քրիստոնէութիւն մը կը գտնուէր ի Հայաստան հայրապետին Խոսրովու հալածանքին մէջ նահատակուած լինելուն ենթադրութիւնը չկրնար արդարանալ, որովհետև Մհերուծան կապրէր Խոսրովու սպանութենէն 14 տարի ետքը: Ազաթանգեղոս երկու հրովարտականք յառաջ կը բերէ Խոսրովու որդի Տրդատէն տրուած որովք քրիստոնէից դէմ հալածանք կը հրատարակուի Հռովմայեցի կայսրներուն հրովարտականքուն նմանողութեամբ (Ազաթ. 102, 106), և թէպէտ այդ հրովարտականքը 287 թուականէն յետոյ հրատարակուած են, այլ անկէ յառաջ ալ, Խոսրովէն ետքը նորա հալածող հոգիին իւր զաւկին անցած լինելը, դիպուածոց շարքին հետ շատ լաւ կը կապուի:

40. Գեղեցիկ յիշատակ մըն ալ ունիմք յայսմաւուրքէն որ մայիս 11-ին կը դնէ Ս. Թէոդորոս Սալուհունիի յիշատակը. Սուրբէն Սալահունեաց նախարար կը բնակէր ի Սուրբնայէն (այժմ Զուրուն գիւղ 'Իերջանու). իւր Աթենադորոս հիւանդ որդւոյն համար չաստուածներու եղած ուխտեր օգուտ չէին ըներ. երբ Տասիոս քրիստոնեայ և քահանայ զիրենք քրիստոնէութեան կը հրաւիրէ, Աթենադորոս և մայրն Աղուիթա կը հաւանին և կը մկրտուին, տղայն կը կոչուի Թէոդորոս և կը բժշկուի մկրտուելէն ետքը: Բայց Սուրբէն կը զայրանայ զաւկին քրիստոնէութեան վրայ, գայն՝ կը նեղէ և կը բռնադատէ, և հաստատուն գտնելով կը սպաննէ Սեղեմնուտ ձորակին մէջ ծառի մը ներքև գտնուող քարի վրայ: Թէոդորոս կը թաղուի նոյն տեղը. եօթը տարի ետքը Տասիոս քահանայն, և անկէ ետքը Աղուիթա տիկինը մեռնելով Թէոդորոսի վանքը կը թաղուին: Այդ գերեզմանին վրայ շինուած է Գոռփու Ս. Թէոդորոս վանքը, որ այժմ Սըրըքը Ս. Թորոս կը կոչուի, և ուր սրբոյն գերեզմանէն և մասունքէն զատ պահուած են նուիրական ձող մը և քար մը իւր նահատակութեան ծառն ու քարը: Ս. Թէոդորոսի գերեզմանին մօտ կը ցուցուի Ս. Տասիոսի գերեզմանը: Պատմութեան մէջ յիշուած է Թէ նոյն միջոցին Ս. Լուսաւորիչը Սրղնկայէ Արտաշատ կը տանէին, և Ս. Թէոդորոսի նահատակութիւնը իրանց տրուիլ 287-ին, և Ազաթանգեղոսի յառաջ բերած հրովարտականքէն առաջինը նոյն թուականին գրուած լինելով, ի դէպ է հետեւցնել Թէ թագաւորական հրամանն էր որ Սուրբէն նախարարը իւր որդւոյն դահլճ լինելու գրգռեց:

41. Մինչև ցարդ յառաջ բերուած յիշատակները ամփոփելով կունենամք մէկ կողմանէ Մեծ Հայոց յատուկ հայրապետներու և եպիսկոպոսներու շարք մը, և միւս կողմանէ հաւածանքներու և մարտիրոսներու շարունակութիւն մը, որով պայծառ և լուսաւոր կերպով կը ցուցնեն, թէ Առաքելներէն մինչև Լուսաւորիչ, քրիստոնէութեան առաջին երեք դարերուն մէջ Հայոց աշխարհը կարևոր քրիստոնէութիւն մը ունեցաւ, և Հայոց Եկեղեցին իւր առաքելական յաջորդութիւնը պահեց։ Որոշ դարուն մէջ միջոց մը հայրապետներուն անունը չգիտնալին, երբէք մեր պնդած ճշմարտութիւնը չնուազեր։ Յիշատակաց և դպրութեանց նուազ եղած ժամանակ, և հալածանաց և փոթութեանց մէջ այսպիսի յիշատակաց դատարկներ շատ բնական են, և գրեթէ ամեն աթոռներ ալ այսպիսի դատարկներ ունին, և շատեր ալ լոկ հաւանական յիշատակներով այդ դատարկները լեցուցած են։ Մեք անգամ մը ըսինք թէ մեր յիշատակներուն դատարկներ ունենալը, անոնց ստուգութեան երաշխաւորութիւն են. որովհետև կեղակարծ և քմահաճ յիշատակաց հեղինակները անթերի արտագրութիւններ ներկայելու փափագը կունենան։ Գիտենք թէ մեր պատմագիրներ Լուսաւորչի քարոզչութիւնները յառաջ բերած տոննին, այնպէս իմն կը ցուցնեն թէ նոյն միջոցին Հայաստանի մէջ բնաւ քրիստոնեայ գտնուած չլինէր. սակայն այս անոնց համար Լուսաւորչի գործին մեծութենէ գրաւուած և սեւեռուածն քաղաքարին արդիւնքն է. կարծես թէ Լուսաւորչի գործին մեծութիւնը ապացուցանելու համար պէտք լինէր ըսել, թէ Գրիգոր վիրապէն չլիւծ Հայաստանի մեջ քրիստոնեայ մը չկար և թէ Գրիգորի վիրապէն ելնելէն ետքը Հայաստանի մէջ հեթանոս մը չմնաց։ Սակայն Արտագետն յիշատակարանը կըսէ յայտնապէս. «Թէ ի ժամանակ սրբոյն Գրիգորի Պարթևի լեալ իցէ քրիստոնէութիւն, ընդ նմին և տեսուչ եկեղեցւոյ ի թաքուն և խաւարչուտ տեղւոջ» (Սամ. 280.)։ Թէոդորոս Սալահունին մկրտող Տասիս քահանան, Հռիփսիմեանց ընկերացող հայ քահանայներ, քրիստոնեայ պաշտօնէից աստ և անդ ներկայութեան նշաններ են։ Բայց ասոնցմէ զօրաւոր փաստ մը ունիմք. դիտելով թէ Լուսաւորչի վիրապէն ելնելէն ետքը, հազիւ տարւոյ մը միջոցին մէջ, ինչպէս կընար Հայաստանի ամեն կողմերը և ամեն ծայրերը քրիստոնէութիւնը տարածուած լինել, եթէ չենթադրենք թէ ամեն կողմ քրիստոնեայներ և եկեղեցւոյ պաշ-

տօնեաներ կային, հալածանաց վախէն թաքուցեալ և ծածկեալ վիճակի մէջ, որք յանկարծ ի լոյս եկան և փայլեցան թագաւորական հրովարտակով ազատութիւն շնորհուելուն պէս: Գրիգորի բնոր աշխատութիւնը մայրաքաղաքի և արբունիքի վրայ ամփոփուեցաւ, և, ընկերներ ալ չունեցաւ, և իւր հրամանով զանազան կողմեր դացողներ ալ չեղան: Ուրեմն Հայ քրիստոնէութիւնը Առաքելներէն սկսելով շարունակեց, և մինչև Լուսաւորիչ չպակսեցաւ, հայ առաքելական եկեղեցին չընդհատեցաւ, հայ առաքելական հայրապետութեան շարունակութիւնը չկորսուեցաւ, ամենայն ինչ մոխրի ներքեւ ծածկուած կրակի պէս վառ ու կենդանի մնաց, և վերապին կենդանութադ գերեզմանէն հրաշիւք ելնող Գրիգորի քարոզութեամբ. և հալածողէ պաշտպան դարձող Տրդատի բարձր հրամանով, մոխիրը ցրուեցաւ, կրակը փայլեցաւ, և Հայեր լուսաւորուեցան լոյս հաւատոյ լուսաւոր ճառագայթներով:

ԳՆՆԱՍԻՐ

Կ. Պօլիս.